ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի և տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«25» հոկտեմբերի 2021թ.

Ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

Էդգար Մելքոնյան՝ Դատական դեպարտամենտի արձանագրային վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմինե Ալիխանյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/23» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Սմարթլայն» ՍՊԸ-ի, Դավիթ Քոչարյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքի վերաբերյալ.

«Սմարթլայն» ՍՊԸ-ն, Դավիթ Քոչարյան ԱՁ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

«Սմարթլայն» ՍՊԸ-ի, Դավիթ Քոչարյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և ընթացակարգը 5-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 3-րդ, 7-րդ չափաբաժինների մասով ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ չափաբաժինների մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով Սմարթլայն ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 13-րդ, 14-րդ չափաբաժինների մասով Դավիթ Քոչարյան ԱՁ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 1-ին, 3-րդ, 7-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի հայտը մերժել,

- 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ի հայտը մերժել,

-1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի հայտը մերժել,

-4-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ Տոնէքս ՍՊԸ-ի հայտը մերժել,

2.2 5-րդ չափաբաժնի մասով աճուրդն ամփոփվելու պահին ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի և ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից ներկայացրած մինիմալ գները կրկնվել են, ուստի նշված չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի, ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

9-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ չափաբաժինների մասով՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 5-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝ Տիգրան Զեյնալյան

Արուս Խաչատրյան